

ԸՆԴԴԻՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Էդիտա Ալթունյանի «Տարածաժամանակային հարաբերությունների արտահայտությունը Ղարաբաղի բարբառում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ալթունյանի ատենախոսությունը նվիրված է հայ բարբառագիտության, հայոց լեզվի բառագիտության և իմաստաբանության արդիական խնդիրներից մեկին՝ Ղարաբաղի բարբառում տարածաժամանակային հարաբերություններ արտահայտող բառամիավորների համակարգային քննությանը: Աշխատության շրջանակներում հեղինակն իրականացրել է բազմակողմանի հետազոտություն՝ համադրելով նկարագրական, պատմահամեմատական, ստուգաբանական, իմաստաբանական, կառուցվածքային, լեզվամշակութաբանական և ճանաչողական լեզվաբանության մեթոդները: Նման մեթոդների կիրառումը հնարավորություն է տվել քննվող լեզվական նյութը ներկայացնել ոչ միայն որպես առանձին բառամիավորների ամբողջություն, այլև որպես ներքին օրինաչափություններով հատկանշվող համակարգ:

Ատենախոսության թեման արդիական է ինչպես լեզվաբանական, այնպես էլ մշակութային տեսանկյունից: Ժամանակի և տարածության հասկացությունները համամարդկային ճանաչողության հիմնարար կատեգորիաներ են, որոնց լեզվական արտահայտության ուսումնասիրությունը ժամանակակից լեզվաբանության կարևորագույն ուղղություններից է: Միաժամանակ հայ բարբառագիտության մեջ Ղարաբաղի բարբառի տարածաժամանակային բառապաշարը մինչ այժմ չի եղել առանձին համալիր ուսումնասիրության առարկա: Այս առումով աշխատանքը լրացնում է հայ բարբառագիտության բացերից մեկը և էապես հարստացնում տվյալ բնագավառի գիտական ուսումնասիրությունները:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև արտալեզվական իրողություններով: Արցախի հայաթափումից հետո Ղարաբաղի բարբառը հայտնվել է իր բնական լեզվական միջավայրից դուրս, ինչը լուրջ վտանգ է ստեղծում նրա պահպանման և հետագա կենսունակության համար: Նման պայմաններում բարբառի բառապաշարի գիտական փաստագրումն ու համակարգված ուսումնասիրությունը ձեռք են բերում ոչ միայն լեզվաբանական, այլև պատմամշակութային և ազգային հիշողության պահպանման կարևոր նշանակություն: Այս տեսանկյունից ատենախոսությունը կարելի է գնահատել նաև

որպես հայկական լեզվամշակութային ժառանգության պահպանմանն ուղղված արժեքավոր գիտական ներդրում:

Հեղինակը հստակ սահմանել է հետազոտության նպատակը և դրանից բխող խնդիրները: Աշխատության հիմնական նպատակը Ղարաբաղի բարբառում տարածական և ժամանակային հարաբերություններ արտահայտող բառամիավորների հայտնաբերումն ու համակարգային ուսումնասիրությունն է՝ դրանց ծագման, իմաստային կառուցվածքի, բառակազմական առանձնահատկությունների, գործառական կիրառության և ճանաչողական հիմքերի բացահայտմամբ: Առաջադրված խնդիրները փոխկապակցված են և հետևողականորեն քննվում են աշխատանքի բոլոր բաժիններում, ինչի շնորհիվ հետազոտությունը պահպանել է ներքին տրամաբանական ամբողջականությունը:

Ատենախոսության կարևոր առանձնահատկություններից է այն, որ հեղինակն ուսումնասիրության առարկան դիտարկում է որպես ամբողջական համակարգ: Տարածական և ժամանակային հարաբերություններ արտահայտող բառամիավորները չեն ներկայացվում որպես առանձին բառերի ամբողջություն, այլ քննվում են դրանց փոխհարաբերությունների, իմաստային դրսևորումների և գործառական առանձնահատկությունների տեսանկյունից: Այս մոտեցումը հնարավորություն է տվել բացահայտելու Ղարաբաղի բարբառի բառապաշարի ներքին կառուցվածքը և ցույց տալու, որ տարածության ու ժամանակի արտահայտությունը պայմանավորված է ոչ միայն լեզվական, այլև ճանաչողական և մշակութային գործոններով:

Աշխատանքի կարևոր ձեռքբերումներից է նաև տարածական և ժամանակային հարաբերությունների քննությունը ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից: Հեղինակը հիմնավորում է, որ լեզվական միավորները միայն հաղորդակցական միջոցներ չեն, այլ արտացոլում են լեզվակրի մտածողությունը, աշխարհընկալումը և մշակութային փորձառությունը: Այս դիտարկումները հետազոտությունը դուրս են բերում ավանդական բառագիտական ուսումնասիրությունների շրջանակներից և այն կապում ժամանակակից լեզվաբանական տեսությունների հետ՝ ապահովելով աշխատանքի տեսական բարձր արժեքը:

Հատկանշական է նաև այն, որ հետազոտության շրջանակներում լայնորեն օգտագործվել են կենդանի խոսքի նյութը, բանահյուսական սկզբնաղբյուրները և բարբառային բառարանների տվյալները: Այդ փաստական նյութի համակարգումն ու գիտական շրջանառության մեջ ներառումը ինքնին արժեքավոր ներդրում է հայ բարբառագիտության համար հատկապես ներկայիս պայմաններում, երբ Արցախի լեզվամշակութային ժառանգության փաստագրումն ու պահպանումը դարձել են առաջնային խնդիրներից մեկը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը ներկայացված է երեք փոխկապակցված գլուխներում, որոնցից յուրաքանչյուրը ծառայում է հետազոտության ընդհանուր նպատակի իրականացմանը: Գլուխների հաջորդականությունը տրամաբանորեն հիմնավորված է. հեղինակը նախ ներկայացնում է տարածական հարաբերություններ արտահայտող բառամիավորների համակարգը, ապա անդրադառնում ժամանակային հարաբերություններին, իսկ վերջին գլխում երկու իմաստային ոլորտները դիտարկում է որպես փոխկապակցված համակարգ: Այս կառուցվածքը հնարավորություն է տալիս հետազոտությունն իրականացնել մասնավորից դեպի ընդհանուրը՝ ապահովելով աշխատանքի ներքին ամբողջականությունն ու տեսական ավարտունությունը:

Առաջին գլուխը, որում քննվում են տարածական հարաբերություններ արտահայտող բառամիավորները, առանձնանում է նյութի համակարգված ներկայացմամբ: Հեղինակը, հենվելով հարուստ փաստական նյութի վրա, ներկայացնում է տարածական հարաբերություններ արտահայտող բառամիավորների համակարգը՝ դրանք դասակարգելով ըստ իմաստային և գործառական հատկանիշների: Ընտրված մոտեցումն էապես տարբերվում է հայ բարբառագիտական ավանդական ուսումնասիրություններից, որոնցում նման նյութը հիմնականում ներկայացվել է նկարագրական կամ բառարանային սկզբունքով: Այստեղ առաջին անգամ փորձ է արվում բացահայտել տարածական իմաստ արտահայտող միավորների ներքին կառուցվածքը, փոխհարաբերությունները և համակարգաստեղծ առանձնահատկությունները:

Առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հեղինակը տարածական հարաբերությունների արտահայտությունը չի սահմանափակում միայն մակբայներով կամ տեղանուններով, այլ ուսումնասիրում է լեզվական տարբեր միջոցների՝ գոյականների, կապերի, հետադրությունների, դարձվածային միավորների և այլ բառատեսակների մասնակցությունը տարածական իմաստի ձևավորմանը: Նյութի նման համակողմանի ընդգրկումը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմելու Ղարաբաղի բարբառի տարածական իմաստ արտահայտող բառամիավորների մասին և բացահայտելու դրանց կառուցվածքային բազմազանությունը:

Գիտական արժեք են ներկայացնում նաև հեղինակի ստուգաբանական դիտարկումները: Դրանք չեն սահմանափակվում նախորդ ուսումնասիրությունների վերաշարադրմամբ, այլ ուղեկցվում են համադրություններով, ինքնուրույն մեկնաբանություններով և հիմնավորված եզրահանգումներով: Հեղինակը հաճախ համեմատում է Ղարաբաղի բարբառի տվյալները գրաբարի, գրական հայերենի և այլ բարբառների նյութի հետ, ինչի շնորհիվ բացահայտվում են բառերի պատմական

զարգացումը, հնչյունական փոփոխությունները և իմաստային տեղաշարժերը: Նման համեմատական վերլուծությունները ոչ միայն խորացնում են լեզվական փաստերի մեկնաբանությունը, այլև ցույց են տալիս Ղարաբաղի բարբառի տեղն ու դերը հայերենի ընդհանուր բարբառային համակարգում:

Երկրորդ գլուխը նվիրված է ժամանակային հարաբերությունների արտահայտությանը և աչքի է ընկնում լեզվական նյութի բազմաշերտ մեկնաբանությամբ: Հեղինակը ժամանակային հարաբերություններ արտահայտող բառապաշարը դիտարկում է որպես միասնական համակարգ, որտեղ յուրաքանչյուր բառամիավոր ունի իր իմաստային և գործառական հստակ տեղը:

Հեղինակը ցույց է տալիս, որ այդ բառամիավորները սերտորեն կապված են ժողովրդի տնտեսական գործունեության, եկեղեցական տոնացույցի, ընտանեկան ավանդույթների և ժողովրդական աշխարհընկալման հետ: Այս մոտեցման շնորհիվ բառամիավորները ներկայացվում են որպես պատմամշակութային տեղեկատվության կրողներ, ինչը զգալիորեն բարձրացնում է հետազոտության գիտական արժեքը և ընդլայնում դրա միջգիտակարգային նշանակությունը:

Ատենախոսության երրորդ գլուխը աշխատանքի՝ տեսական առումով առավել ինքնուրույն և արժեքավոր մասն է: Եթե առաջին երկու գլուխներում հեղինակը հիմնականում նկարագրում և համակարգում է տարածական ու ժամանակային հարաբերություններ արտահայտող բառապաշարը, ապա այստեղ կատարվում են տեսական ընդհանրացումներ, որոնց հիմքում դրված է հետազոտության ընթացքում կուտակված փաստական նյութը: Հեղինակը համոզիչ կերպով հիմնավորում է, որ տարածությունն ու ժամանակը լեզվում հանդես են գալիս որպես փոխկապակցված ճանաչողական կատեգորիաներ: Բազմաթիվ օրինակների միջոցով ցույց է տրվում, որ տարածական իմաստ ունեցող բառերը հաճախ զարգացնում են ժամանակային նշանակություններ, իսկ ժամանակային պատկերացումները որոշ դեպքերում ձևավորվում են տարածական ընկալումների հիման վրա: Այս դիտարկումները համահունչ են ճանաչողական լեզվաբանության արդի տեսություններին և վկայում են հեղինակի տեսական պատրաստվածության մասին:

Ատենախոսության կարևոր ձեռքբերումներից է նաև այն, որ հեղինակը չի սահմանափակվում փաստերի նկարագրությամբ, այլ ձգտում է բացահայտել դրանց ներքին օրինաչափությունները: Ստուգաբանական, իմաստաբանական և բառակազմական վերլուծությունները ներկայացվում են փոխկապակցված ձևով, ինչի շնորհիվ լեզվական յուրաքանչյուր միավոր դիտարկվում է իր պատմական զարգացման, կառուցվածքային առանձնահատկությունների և գործառական կիրառության համատեքստում: Այս

հանգամանքը հետազոտությանը հաղորդում է համակարգային բնույթ և բարձրացնում նրա տեսական արժեքը:

Հատկանշական է նաև, որ ատենախոսության բոլոր եզրահանգումները բխում են փաստական նյութի քննությունից: Հեղինակը խուսափում է չհիմնավորված ընդհանրացումներից, իսկ յուրաքանչյուր տեսական դրույթ ամրապնդում է համապատասխան լեզվական օրինակներով: Այդ հանգամանքը վկայում է հեղինակի գիտական պատրաստվածության, նյութին տիրապետելու և ինքնուրույն վերլուծություն կատարելու կարողության մասին:

Ընդհանուր առմամբ ատենախոսությունը ներկայացնում է ավարտուն և գիտականորեն հիմնավորված հետազոտություն, որն առանձնանում է թեմայի արդիականությամբ, աղբյուրագիտական հարուստ հիմքով, փաստական նյութի ամբողջական ընդգրկմամբ, վերլուծության խորությամբ և տեսական ընդհանրացումների հիմնավորվածությամբ: Աշխատությունն արժեքավոր ներդրում է հայ բարբառագիտության, բառագիտության և լեզվամշակութաբանության բնագավառում և կարող է կարևոր հիմք ծառայել ինչպես հայերենի այլ բարբառների համեմատական ուսումնասիրությունների, այնպես էլ Արցախի լեզվամշակութային ժառանգության հետազոտության փաստագրման և պահպանման համար:

Չնայած ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն ու գիտականորեն հիմնավորված հետազոտություն է, այնուամենայնիվ ունենք մի շարք դիտարկումներ:

1. Առաջին գլխի կառուցվածքը վերանայման կարիք ունի: Ընդհանուր վերնագրի և դրան հաջորդող ենթավերնագրերի միջև կառուցվածքային անհամապատասխանություն կա: Գլխի վերնագիրն է՝ «Տարածական հարաբերությունների արտահայտությունը Ղարաբաղի բարբառում», որին առանց համարակալման հաջորդում է մեկ այլ վերնագիր՝ «Տարածական հարաբերությունների լեզվական կադապարավորումը»: Վերջինս, սակայն, չի ներկայացվում որպես համարակալված ենթագլուխ, և միայն դրանից հետո են սկսվում 1.1–1.5 համարակալմամբ ենթաբաժինները: Այս կառուցվածքը խախտում է բաժինների աստիճանակարգային և տրամաբանական հաջորդականությունը: Անհրաժեշտ է հստակեցնել «Տարածական հարաբերությունների լեզվական կադապարավորումը» վերնագրի կարգավիճակը՝ այն կա՛մ ներառելով գլխի ընդհանուր վերնագրի մեջ, կա՛մ տալով համապատասխան համարակալում:

2. Ատենախոսության մեջ Ղարաբաղի բարբառի տվյալները բազմիցս համեմատվում են գրական հայերենի և այլ բարբառների նյութի հետ: Այդ համեմատությունները գիտականորեն հիմնավորված են և նպաստում են եզրահանգումների հավաստիությանը: Այնուամենայնիվ, առանձին բաժիններում դրանց ներկայացումը աղյուսակների, գծապատկերների կամ ամփոփիչ դասակարգումների միջոցով առավել դյուրին կդարձներ

նյութի ընկալումը և առավել տեսանելի՝ քննվող երևույթների ընդհանրություններն ու տարբերությունները:

3. Աշխատանքում հոմանիշային շարքի անդամների գործառական և տարածքային տարբերությունները ոչ լիարժեք են բացահայտվում, այսպես՝ հեղինակը մանրամասն ներկայացնում է **ա՝ նգյո՝ւն, թա՝րա՝փ, դօլ, յան, կյո՝ւս, պուճախ, քյո՝ւնջ, բուրջ** և այլ բառեր, սակայն հիմնականում ընդգծվում է դրանց իմաստային ընդհանրությունը: Լավ կլիներ, որ ցույց տրվեր, թե խոսքային ինչ իրավիճակներում է նախընտրելի յուրաքանչյուր միավորի գործածությունը, ոճական, տարածքային կամ սերնդային ինչպիսի տարբերություններ կան դրանց կիրառության մեջ:

4. Աշխատանքում նկատվում է տեսական ընդհանրացումների պակաս: Ատենախոսության գլուխներում կուտակված են մեծաքանակ բառանյութ, օրինակներ և դարձվածային միավորներ, որոնք միշտ չէ, որ ուղեկցվում են համապատասխան տեսական ընդհանրացումներով: Նյութի ընկալումն առավել դյուրին կլիներ, եթե ենթաբաժինների վերջում տրվեին կարճ ամփոփումներ՝ առանձնացնելով կատարված վերլուծության հիմնական արդյունքներն ու դրանց գիտական նշանակությունը, իսկ հոմանիշային խմբերը ներկայացվեին նաև աղյուսակների կամ գծապատկերների տեսքով:

5. Եզրակացությունները բաղկացած են 13 կետից, որոնցում առկա են կրկնվող կամ բովանդակային առումով մասամբ համընկնող դրույթներ: Մասնավորապես, 2-րդ և 3-րդ կետերը վերաբերում են բնիկ բառաշերտին, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերը՝ փոխառյալ միավորներին, 8-րդ և 9-րդ կետերը՝ հոմանիշային հարաբերություններին: Ուստի նպատակահարմար կլիներ եզրակացությունների թիվը կրճատել՝ 13 կետի փոխարեն ներկայացնելով մոտավորապես 8–10 ընդհանրացված եզրահանգում: Դրանցից յուրաքանչյուրում անհրաժեշտ է ոչ թե կրկնել հետազոտության ընթացքում կատարված նկարագրությունը, այլ հակիրճ ձևակերպել ուսումնասիրության արդյունքում բացահայտված էական օրինաչափությունը, առանձնահատկությունը կամ գիտական ընդհանրացումը:

6. Ատենախոսության հավելվածում ներկայացված բառային նյութը գիտական մեծ արժեք ունի և կարող է հիմք ծառայել հետագա ուսումնասիրությունների համար: Հետագայում նպատակահարմար կլինի այդ նյութն առավել ընդլայնել՝ յուրաքանչյուր բառամիավորի համար հնարավորության դեպքում նշելով նաև աշխարհագրական տարածվածությունը, տարբեր խոսվածքներում կիրառվող տարբերակները, կիրառության հաճախականությունը և կենդանի խոսքից արձանագրված օրինակներ: Նման համալրումը հավելվածը կդարձնի առավել արժեքավոր նաև բարբառագիտական և բառարանագրական հետագա աշխատանքների համար:

Բարբառագիտական անթերի աշխատանք չի կարող լինել: Գրախոսվող աշխատությունը, հասկանալի է, բացառություն կազմել չէր կարող: Կարևորն այն է, որ վերոնշյալ դիտարկումները, վերաբերելով առանձին հարցերի և կրելով մասնակի բնույթ, փոքր մասն են կազմում այն ծանրակշիռ դրականի, որ կարելի է ամփոփել հետևյալ սեղմ խոսքում:

Էդիտա Ալթունյանի «Տարածաժամանակային հարաբերությունների արտահայտությունը Ղարաբաղի բարբառում» թեմայով ատենախոսությունն ավարտուն, ինքնուրույն և գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է, որն իր գիտական նորությամբ, տեսական և գործնական նշանակությամբ լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը, իսկ հեղինակի՝ մամուլում տպագրված հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունն ու դրույթները:

Ուստի միջնորդում եմ Հ. Անադյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդին՝ Էդիտա Ալթունյանին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, որին նա լիովին արժանի է:



Շնորհման համար՝

Գ. Գևորգյան

բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ռուս-հայկական համալսարանի

գիտքարտուղար՝

/Ռ. Կասաբաբովա/

24.08.2026